ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ՀՀ, ք. Երևան, 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թորոսյան,

2021թ. փետրվարին հեռավար կարգով կայանալու են *Ջ. Բորկովսկին և Ռասիա ՖԶԷ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության* թիվ ARB/18/28 ներդրումային արբիտրաժային գործով արբիտրաժային լսումները:

Ներդրումային վեճերի կարգավորման միջազգային կենտրոնի (այսուհետ՝ ICSID) Վարչական և ֆինանսական կարգավորումների 14(3) կետի համաձայն՝ կողմերը պետք է պարբերաբար կանխավճարներ կատարեն ICSID-ին՝ ընթացակարգային ծախսերը հոգալու համար: Նշված ծախսերը ներառում են արբիտրների վճարներն ու ծախսերը, ինչպես նաև ընթացակարգային այլ ծախսեր, ներառյալ՝ լսումների կազմակերպման հետ կապված ծախսերը: Համաձայն Ֆինանսական կարգավորման 14(3) կետի՝ եթե Տրիբունալը չի որոշել կամ վեճի կողմերը ծախսերի բաժանման շուրջ այլ կերպ չեն պայմանավորվել, յուրաքանչյուր կողմ վճարում է պահանջվող կանխավճարի կեսը: Ըստ ICSID-ի գնահատման՝ ներկայումս լսումների ծախսերը և արբիտրաժային տրիբունալի վճարներն ու ծախսերը հոգալու համար անհրաժեշտ է ապահովել ընդհանուր 500.000 (հինգ հարյուր հազար) ԱՄՆ դոլար: Հետևաբար, յուրաքանչյուր կողմ պետք է ICSID-ին կանխավճար կատարի համապատասխանաբար 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլարի չափով: Հարկ է նշել, որ վճարումը պետք է կատարվի մինչև 2021թ.-ի **փետրվարի 10**-ը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչությանը՝ ապահովել ICSID քարտուղարությունից ստացված նամակի հիման վրա՝ 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության թիվ 2215-Ն որոշման 3-րդ, 4-րդ և 6-րդ հավելվածների «*Միջազգային արբիտրաժային տրիբունալի կամ օտարերկրյա ներպետական դատարանի ծախսերի վճարում*» 12002 միջոցառման ներքո ընդհանուր 250.000 ԱՄՆ դոլարի չափով գումարի վճարումը ընթացակարգային ծախսերի համար:

Կից ներկայացնում եմ ICSID քարտուղարությունից ստացված նամակը:

Առդիր՝ 1 էլեկտրոնային ֆայլ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

x

ԵՂԻՇԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Կատ.՝ Միջազգային արբիտրաժներում և այլ միջազգային դատարաններում
ՀՀ շահերի պաշտպանության վարչություն
Հեռ.՝ 010-51-55-94/95